թեամբ. մինչդեռ հոն կոտրի և լքանի հայ սիրտը ազգութեանս իսպառ կործանումը տեսնելով։ Հոս հայաշէն և հայախօս հազարաւոր ժողովրդով քաղաք մի կ'ելնայ ընդ առաջ ճանապարհորդին հինգ մեծամեծ հայարնակ գիւղերով. խօսքս Նոր-Նախիջևանու համար է։ — Այլ մեք դադրեցընելով առ ժամս մեր ուղևորութեան պատմութիւնը, քննենք թէ ի՞նչ պատճառաւ Հայք թողով զՂրիմ եկած են այս տեղ, ի՞նչպէս եկած են, և ո՞յք եղած են նոցա առաջնորդք։

Դ

ՀԱՅՈՑ Ի ՂՐԻՄԷ Ի ՆԱԽԻՋԵՒԱՆ

ԳԱՂԹԵԼՈՒՆ ՊԱՏՃԱՌՈՒ.

Օրինաք բնութեան՝ մարդս կը սիրէ իւր ծնած և մեծցած տեղը. և քիչ են այն անհատներն՝ որք թողլով իրենց աննդեան վայրը՝ աստանդական կեանք վարեն։ Ինչպէս առանձին մարդ, նոյնպէս ժողովուրդ մի, ազգ մի, բնական կերպով չէ կարող թողուլ լքանել իւր պապենական աշխարհքը, և երթալ օտար տեղ, անծանօթ երկնից ներքև տուն և բնակութիւն հաստատել։ Այդպիսի բանի ձեռք զարնելու համար՝ մեծ և հարկեցուցիչ պատճառներ կարևոր են. ինչպէս մեր տարաբաղդ Անեցւոց պատահած են, ժաժ, հուր, թուր։ Ղրիմեցի Հայոց իրենց 400 տարուան՝ ծնած, սնած և մշակած բարերար և գեղեցիկ աշխարհքը, երկորդ հայրենիքը Ղրիմը՝ թողու և երթալու հիւսիսային աշխարհաց մէջ բնակութիւն հաստատելու